

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՒՈԼԻՒՑԻԱՆ

ՄԻՔԱՅԵԼ. ՅՈՎՀԱՆՆԻԵՍԵԱՆԻ

Հեղէլ, — Ֆօյերբախ, — Մարքս, — Պատմութեան մատերիալիստական ըմբռնումը,

Անցնենք սոցիալական էւոլիցիօնիզմի երկրորդ հոսանքին, որը բղխում է, ինչպէս արդէն յիշել ենք<sup>1)</sup>, Հեգէլի փիլիսոփայութիւնից։ Պատմութեան փիլիսոփայութիւնը (որը զբաղվում է սոցիալական էւոլիցիայի արոբլեմով) մի անբաժան մասն է կազմում Հեգէլի հոյակապ փիլիսոփայութեան։ առաջինը լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է երկրորդի ծանօթութիւնը։

Հեգէլի փիլիսոփայութեան մէջ ամեն բան վերածում է զաղափարի։ Գաղափարն է միակ իրականութիւնը, նա ամեն իրականութեան բովանդակումն է։ Գաղափարը կամ համաշխարհային «բացարձակ ոգին» գոյութիւն ունի յաւիփենականութիւնից ի վեր, տիեզերքից անկախ—և տիեզերքից առաջ գոյութիւն է ունեցել որ և է տեղ։ Նա շարժում է ներքին յարակայ մի սկզբունքի զօրութեամբ, անցնում է պէս-պէս յաջորդական շրջաններ։ Զելով նախնական ազատ ու պարզ զրութիւնից, երբ նա դեռ ինքն իրեն գոյութիւն ունէր՝ (Der Geist an sich) իբրև սոսկ պոտէնց (կարողութիւն), առանց որ և է բովանդակութեան, առանց որակի ու քանակութեան՝ տիեզերական ոգին կուրս է գալիս իրենից, մերկանում է բնութեան մէջ, իրականացնում է բնութիւնը իր տարրեր ասրիճաններով, անցնում է մեխանիկայի, Փիզիկայի, օրգանիզմի դրութիւններից, ապա թօղնում է բնութիւնը, ուր նա իրեն օրարէ զգում, և նորից վերազանում է դէպի ինքը, նորից գրնում է ինքինքը, որպէս ազատ ոգի, գիտակից գաղափար և բացարձակ

<sup>1)</sup> Տես Մուրճ 1898, № 10—11.

ճշմարտութիւն։ Այդ անսահման պրոցէսի առաջին Փազիսը (մինչեւ ոգու արտայացութիլը բնութեան մէջ) պարկանում է տրամաբանութեան, երկրորդ Փազիսը (ոգին շարժուում է բնութեան մէջ) պարկանում է բնութեան փիլիսոփայութեան, վերջապէս երրորդը՝ (ոգին գրնում է ինքափինքը) պարկանում է մաքրի փիլիսոփայութեան։

Այդ վերջինի մէջն է մինում պատմութեան փիլիսոփայութիւնը։

Այդպիսով, ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի՝ Փիղիկական ու բարոյական աշխարհը, բնութիւնը և մարդկային պատմութիւնը ոչ այլ ինչ են, եթէ ոչ միևնոն զաղափարի յաջորդական փաղիները։ Մի անհուն պրոցէս, մի անընդհարու, ճակարտագրական շարժում, որի մի մասն է կազմում մարդկութեան պատմութիւնը։

Նարժումը դիալեկտիկական է։ Ամեն մի միտք, ամեն մի առարկայ պարունակում է իր մէջ իր բայցասականը, ամեն մի դրութիւն՝ իր հակաբրութիւնը։ Միոքը մի անդամ դրւելով՝ բայցասում է ինքն իրեն, բայց փոխանակ ջնջւելու այդ հակասութիւնով՝ նա, այսպէս ասած, հաշրտում է իրեն հետ մի նոր գաղափարի մէջ, մի նոր իրականութեան մէջ, որ աւելի բարդ ու հարուստ է։ Այդ նոր դաղափարը հասրարւելով՝ նոյնպէս ժխտում է ինքն իրեն, ապա նորից վրայ է հասնում հաշրտութիւնը կամ համադրութիւնը (սինթէզ), և այդպէս անընդհարու շարունակում է պրոցէսը՝ դրութեամբ, հակագրութեամբ ու համադրութեամբ—մինչեւ որ դաղափարը հասնում է իր բացարձակ կափարելութեան, ուր նա իբրև բացարձակ ոգի՝ հանդիսանում է գերագոյն արգասիքը դիեզերական կերպարանափոխութեան։

Այս է Հեգէլի հռչակաւ որ տրիանգը և գիալեկտիկական շարժումը։ Նա ընդգրկում է բովանդակ տիեզերքը, դասաւորում, շղթայում ու բացարում է մաքրի և իրականութեան բոլոր բարերերը՝ բնութիւնը իր բոլոր թագաւորութիւններով, ոգին իր բոլոր Փազիսների մէջ, պատմութիւնը իր բոլոր դարաշրջաններում, քաղաքականութիւնը, գեղարւեսորը, կրօնը, գիրութիւնը և այլն։ Ամեն գեղ նոյն անխուսափելի դրիագի կիրառումն ենք դեսնում։

Համաշխարհային պատմութիւնը, որ Հեգէլի համար մի անըլը աժեռագեցր գիալեկտիկական պրոցէս է, շարժում է—դրիագի օրէնք-

Ներով—երկու բևեռների միջև՝ անազատութեան (Unfreiheit) և ազատութեան։ Ազատութիւնը հանդիսանում է իր նպալուակ պակամական էւոլիւցիացի։ Առաջին էպոխան ժամանակագրապէս այն է, ուր միայն մէկն է ազար (միահեծան պետը)—արևելեան ազգերի պատմութիւնը։ Դրան յաջորդում է երկրորդ էպոխան, ուր շատերն են ազար—յունական-հռովմէականը։ Վերջապէս գալիս է երրորդ էպոխան, ուր ըոլորն էլ ազար են—նորագոյն պատմութիւնը<sup>1)</sup>։ Ազարութիւնը, ըստ Հեգէլի, միայն պետութեան մէջ է զարգանում, և պատմութիւնը սկսում է միայն պետութեան ծագումով, իսկ նրանից առաջ՝ մարդկութեան վայրենական ու բարբարոսական երկարադրւ շրջանները չեն զբաղեցնում Հեգէլին։ Թերես մեղաւորն էր այդուել էթնոգրաֆիայի տակաւին ալքար վիճակը։ Բայցարձակ սգին սկսում է իր չուն Զինաստանից, անցնում է Հնդկաստան, այն-փեղից՝ Պարսկաստան, Յունաստան, Հռոմ, Գերմանիա—յաջորդաբար, երբէք ըլ բնակելով երկու վայրերում միաժամանակ կամ երկու անգամ միւնոյն վայրում։

Հեգէլը բնական ագենտների ազգեցութեան քիչ պեղ է գոալիս։ Իացց գրա փոխարէն՝ նա մի նոր էլեմենտ է մոցնում սոցիալական էւոլիւցիօնիզմի մէջ։ Նա ընդունում է, որ մարդկութեան ասբիճանական զարգացումը ունի իր յարուկ, ներգոյակ օրէնքները՝ անկախ շրջապարող միջավացրի փոփոխութիւններից, բնութեան ազդակների խաղերից։ Այնոքեղ, ուր շրջապարող բնութիւնը չի փոփոխում, մարդկացին հասարակութիւնը կը դադապարփռի հազարաւոր դրաբների ընթացքում՝ անշարժ մնալու, եթէ ուրիշ, զուր սոցիալական մղումներ հրապարակ չը գան։

Այդպիսով, Լամարկից և Դարի ինիզմի ու իշշ նախակարա-

<sup>1)</sup> Պէտք է նկատել, որ քաղաքական աշխարհում Հեգէլի բացարձակ իդէալիզմը փոխում է ամենակոպիտ ու էալիզմի։ Նրա քաղաքական իդէալն էր բիւրովլրատ մի պերութիւն՝ նման մօրաւորապէս իր ժամանակակից Պրուսիակին։ Եւ նրա հոչակաւոր Փրազը՝ Alles, was wirklich ist, ist vernünftig (ինչ որ իրական է՝ բանաւոր է) կարծէք սրբագործել ։ ուզում 20-ական թւականների պրուսական ուժիմը։ Այդ Փրազից օգտւեցին լեռագալում ծալրաւեղ պահպանողականները, ինչպէս նաև ծալրաւեղ արմադականները։

պեղաներից անկախ նոյն էւոլիւցիոնիզմի սկզբունքն էր, որ տակաւ-  
ւին դարուս քսանական թւականներին փիլիսոփայօրէն արծարծեց-  
շեգէլը: Նրա զիալեկտիկական մեթոդը—որը մի առանձին կարեռ-  
րութիւն ունի մեզ համար—գերազանցագէս չեղափոխական է. նա-  
յարակայ ոչինչ չի ընդունում մոքի և իրականութեան ոչ մի աշ-  
խարհի մէջ: Ամեն բան դառնում է (Werden, devenir): Ամեն-  
բան ժխրում է ինքն իրեն իր նախորդ դրութեան մէջ և փոփոխ-  
ւելով զարգանում է դէպի նոր ձևեր: Մինչև այն օր էաւիրենա-  
կան դիրւած բարոյական, իրաւական և այլ հասկացողութիւն-  
ները յաբարաբռում են փոփոխական, կործանման ենթակայ: Տար-  
բեր ժամանակներում բարբեր են եղել նրանք և բարբեր պէսք է  
լինին միշտ: Հասրաւում է համաշխարհացին յարաբերականութեան  
(Relativité) գաղափարը:

«Դիալեկտիկան ձգտում է րմբոնել իրերը և նրանց գաղափա-  
րական անդրազարձումները (մեր գլուխներում) իրենց մշտադե-  
շարժման ու պարճառական շղթայակցութեան մէջ, իրենց ծագ-  
ման ու անհետացման մէջ: Դիալեկտիկայի բնուակէպիր՝ մարդկացին  
ու արմութիւնը հէնց մարդկութեան զարգացման պրոցէսն է<sup>1)</sup>»:

\* \* \*

Հեգէլի պարմափիլիսոփայական աշխարհայեցութիւնը էաւգէս-  
իդէալիստական է: Ամեն բեղ զաղափարն է շարժման ֆակտորը:  
Իրերը և նրանց զարդացումը իրականացած անդրազարձումներն են  
յաւիրենական գաղափարի. և ոչ ընդհակառակի: Իրականութիւնը  
դլիսի վայր է դրւած:

Հեգէլիանիզմը երկար չարբեց: Երեսնական թւականներից  
արդէն ւկսւել էր Հեգէլեան շկոլայի կազմալուծումը: Հանդէս էր  
եկել նրա «ձախակողմեան թեր» յանձին նպրառաւի, նոյնիւ բար-  
երունօ Բառւէրի, որոնք սկսեցին մի կարարեալ հերձւած: Նրանք  
յարեցին բնափիլիսոփայական մատերիալիզմին. աշխարհս գոյու-  
թիւն ունի անկախ գաղափարից, անկախ ըստիրանական ոգու ցա-  
նրանց փիլիսոփայութիւնը առանձանափակւեց կրօնական հարցերով:

<sup>1)</sup>) Fr. Engels, Anti-Dühring.

Ասպւածաբանութիւնը վրարւեց: Քրիստոնէութիւնը ենթարկեց մոլեգին յարձակումների: Նոր կրակարանի հրաշագործութիւնները հրափարակւեցին կեղծութիւններ, սովիետութիւններ, առասպելներ.—առասպելներ, որոնք մեծ մասամբ հնարևած են իրենց պատմինների կողմից: Դա մի ահարկու և աւերիչ հոսանք էր, որի դէմ անզօր էին թէօլոգիական իմաստասիրութեան բոլոր նրբութիւնները: Կրօնը թէօլոգիական իմաստով մերժւեց և մարդապաշտութիւնը (սէրը կամ պաշտամունքը մարդկութեան) բարձրացւեց մինչև կրօնի տափիճանը: Գաղափարը մերժափիզիկական իմաստով ժխտւեց և դարձաւ սոսկ ամարդկացին ուղեղի արտադրութիւն:

Ասպւած մարդուս ենթակայական (սուբյեկտիվ) էութիւնն է՝ դրսեորւած (ausgesondert, exteriorisé): Մարդս անգիտակցաբար առարկացացնում է իր սեփական էութիւնը և ապա ինքզինքը առարկայ է գարճնում այդ առարկայացրած ու արդէն սուբъեկտ գարձած էութեան: Այդպեղ է կրօնի գաղպանիքը: Դու հաւաքում ես սէրին, իրեւ մի ասպւածացին յարկութեան, որովհետեւ դու ինքդ սիրում ես: Դու հաւաքում ես, որ Սապւած իմաստուն է, որովհետեւ դու քո էութեան մէջ յաւագոյն բան չըգիտես, քան խելքն ու բարութիւնը: Եւ դու հաւաքում ես Սապուծոյ դոյութեան, որովհետեւ դու ինքդ գոյութիւն ունիս, իրեւ սուբյեկտ<sup>1)</sup>:

Գեղարւեստական, դիւթիչ լեզով և վարպետորէն կարարւած՝ Ա. Գրքի ներքին խորհուրդների մի վերլուծումն է քալիս մեզ Ֆոյերբախի «Քրիստոնէութեան էութիւնը», որ յափշտակութեամբ է կարդացւում: Զարմանալի չէ, որ այդ գրւածքը գերել էր իր ժամանակակիցներին և գեռ շարունակում է գերել:

Առնենք Ֆոյերբախից ինչ որ կարեորագոյնն է մեր թեմացի համար ու առաջ գնանք: Նա ուսուցանում է ուրեմն, որ այն բոլոր ցերեագոյն էակները, որոնց սրեղծել է մեր կրօնական երևակայութիւնը, ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ ֆանտաստիկական անդրադարձումն մեր սեփական էութեան: Կրօնի գաղափարը մերժւում է՝ իբր ինքնածին, ինքնուրոյն: Իսկ այդպեղից մինչև անկախ գաղափարների հերքումը ընդհանրապէս՝ մի քայլ է միայն:

<sup>1)</sup> L. Feuerbach, Das Wesen des Christenthums.

Ֆօյերբախը պատմական էւոլիցիայի հարցով յատկապէս չէր զբաղւել: Նա ընդունում էր զարգացման գաղափարը մարդկային պատմութեան մէջ և կարծում էր, որ պատմութեան տարրերութիւններով են բնորոշ: Ում: Զերմ մատերիալիստ բնափիլիսոփայական խնդիրներում՝ նա իդէալիստ մնաց պատմութեան փիլիսոփայութեան մէջ: Սակայն, կրկնում ենք, նա այդ ճիշդով շատ չէր հետաքրքրւել: Կրա ծառայութիւնը այդպեղ, այսպէս ասած՝ անուղղակի է: Շնորհիւ այդպիսի կրօնի ըմբռնումին՝ Ֆոյերբախը եղաւ շաղկապող օլակ Հեղէլի և մի ուրիշ մարդու մի ջև, որը կոչւած էր թերեւս ամենամեծ աղդեցութիւնը գործելու ժամանակակից տնտեսական, սոցիալական ու քաղաքական հասկացողութիւնների վրայ: Այդ մարդին էր Կարլ Մարքսը (1818—1883):

Նա հեղէլեան շկոլայի ծացրացեղ ձախակողմեաններից էր: 40-ական թւականներին երիտասարդական խանդավառութեամբ ող ջունեց նա Ֆոյերբախին, չարագովելով նրա այն հիմնական միոքը՝ թէ կրօնական գաղափարը անդրագարձումն է մեր սեփական էութեան: Եւ արդէն 1844-ին Deutsch—Französische Jahrbücher-ում նա ձախակցում էր Ֆոյերբախին, յայտաբարելով որ մարդն է սպեղծում կրօնը և ոչ կրօնը մարդուն<sup>1)</sup>:

Զերմ հեղէլեան էր Մարքսը, բայց և կարաղի հակառակորդ հեղէլեանիզմի: Նա պիսոդ զրկեց Հեղէլի գիտեկութիւնն, իսկ մնացածը յետ մղեց: Համաշխարհային պատմութեան մէջ ինչ որ կառուրւել է ունեցել է իր ժամանակաւոր անհրաժեշտութիւնը և յարաբերական արդարացումը,—այսպէս է ըմբռնում Մարքսը Հեղէլին<sup>2)</sup>, ու ինքը եղբակացնում է որ ամեն բան, ինչ որ միայն որոշ ժամանակի պայմաններին է համապատասխանել, անհրաժեշտաբար պիտի փոփոխւէր կամ անհետանար այդ պայնանների փոփոխման կամ անհետացման հետ:

Հեղէլի դիալեկտիկայի առաջ ոչինչ չը կայ սուրբ, յաւիտենական, աբսոլիւտ. այս է ըստ Մարքսի՝ հեղէլեանիզմի ցեղափոխական:

<sup>1)</sup> Der Mensch macht die Religion, die Religion macht nicht den Menschen.

<sup>2)</sup> Հեղէլի Փրազը՝ «ինչ որ իրական է, բանաւոր է» այսպէս է մեկնաբանում Մարքսը. ինչ որ իրական է, անհրաժեշտ է, և ուրեմն բանաւոր է:

բնաւորութիւնը։ Սակայն մինչդեռ Հեգէլը դուրս էր բերում պատմական էւոլիցիայի օրէնքները քաջափարձակ գաղափարին ինքնազարդացումից, մինչդեռ նրա համար գաղափարը միակ ինքնակաց իրականութիւնն է՝ Մարքսը եկաւ այն համոզմունքի, որ գաղափարը (ընդհանրապէս!) միայն ռեֆլեքս է, անդրադարձումն է իրական աշխարհի, որ մարդս ինքն է արտադրում գաղափարը (ոչ միայն կրօնական, այլ և ամեն գաղափար) և ոչ այդ վերջինը՝ մարդուն։ Եւ այդ՝ շնորհիւ Ֆոյերբախի ուսումնասիրութեան։ Կիթէ մարդս անդիպակցաբար պրեզծել է կրօնը (ինչպէս Ֆոյերբախն է պնդում), ասկա ի՞նչն է արգելում մեզ ընդունել, որ նա ինքն է արեգծել բոլոր միւս էկոնկրէտա գաղափարները ևս՝ պետութիւն, գեղարւեսպ, գիտութիւն և այլն. ի՞նչու չընդունել, որ նա ինքն է սահմանել իր քաղաքական, իրաւական և այլն դոյլութիւնը—անգիտակցաբար։ Բայց ինչպիսի օրէնքներ են դորձել այդպեսոյ Խնչ հիմնական ուժեր են ղեկավարել սոցիալական հասրատութիւնների ծնունդն ու էւոլիւցիան։ Այդ ինձոռոք հարցին պարասիանելու համար՝ Մարքսը յենուում է դարձու ականաւոր Փրանսիական պարմաբանների՝ Թիէրբիի, Գիգօյի և այլոց ուսումնասիրութիւնների վրայ (որոնց հետ նա ծանօթացել էր 40-ական թւերին Պարիզում)։ Այդ պարմաբանները յայրարարում էին, որ Ֆրանսիայի քաղաքական պարմա-